



## ՍՓՅՈՒՌ ՔՈՒՄ

### ՊԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ «ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ»

Ամենապատիվ Օրմանյան պատրիարքի «Հայոց Եկեղեցի» գիրքը սարսափի մատնածէ կարգինալ Աղաջանյանը, որ իր շիղերը հանդարտացնելու համար ստիպվեր է հետեւյալ հայտարարությունը հրատարակել մամուլի մեջ:

«Եկեղեցին հրապարակ հանված է Օրմանյանի «Հայոց Եկեղեցին» վերնագրված երկասիրությունը»:

Այս առթիվ Հայ Կաթողիկե Պատրիարքարանս պարունակած հիշեցնելու հայ կաթողիկե հասարակության, թե սույն գիրքը արդիված մատյաններու կարգին դասված է հական հանվաննե (ձ՝ l'Index):

Հայ կաթողիկե հավատացյաներն ուստի կզբուշանան զայն վարդապէ կամ նույնիսկ իրենց քովը պահելի:

Գիտակցարար հակառակ գործողները ծանրորեն կմեղանչեն, և, եկեղեցական ընդհանուր օրենսդրության համաձայն, նովին գործով կենթարկվին բանագրանքի, որ հատկապես Ս. Աթոռին վերապահյալ է:

Բացառիկ պարագաներու համար զայն կարգալու արտոնություն տալու իշխանությունը կապտականի Ամենապատիվ Հոգկոր Տիրոջ և միազդորված առաջնորդությունն»:

(«ԱՊ.ԹԵՐ», 11 սեպտեմբերի 1952 թ.)

### «ՄԵՂԱՆՉԵՇ, ԱՊԱ ԽՈՍՏՈՎԱՆԵՇ»

Թելրութահայ ծանոթ ու հարգված աղքա- յիններեն տիար Տաճատ Սրապյանի նախա- ձեռնությամբ վերջերս լույս տեսավ Հայաս- տանյայց Եկեղեցվոր կարկառուն սյուներեն՝ հոգելույս Օրմանյան պատրիարքին «Հայոց Եկեղեցին» ծանոթ ու խորազնին երկասի- րությունը:

Արդարեւ, ծափահարելի է տիար Սրապյա- նին և անոր բարեկամներուն զիհողությունը, որոնք կարմոր պակաս մը կլացնեն մեր Եկեղեցապատմական մարդին մեջ, տրված լւլալով, որ խնդրու առարկա մեծարժեք ու վակերական երկասիրությունը շատունց սպառած է հակառակ բազմաթիվ տպագրու- թյանց արժանանալուն:

Ի լուր սույն գովելի ձեռնարկին՝ հայ կա-

թողիկե պատրիարքն ու «Մասիս»ի խմբա- գրությունը հավար փեցուցած են (տե՛ս «Մա- սիս»ի 30 հունիսի թիվը), մինչ ինդեքսի մեջ առնելով «Հայոց Եկեղեցին» և ընթերցողները բանադրությամբ պատճելու սպառնալիքով, մյուսը՝ մերժելով զայն ու արժանի շգտնե- լով որևէ ողջմիտ հայու գրադարանին մեջ պահվելու:

Հակառակ սակայն դրված արգելքին՝ և գալահան եմ, որ բազմաթիվ կաթողիկ հայ- րենակիցներ պիտի վորձեն զայն կարգալու, բանի որ արգելված բաները անուշ կըլլան Արքամ-Եվային սկսյալ: Հավանաբար այս արգելքը պատճառ դառնա նոր տպագրու- թյան մը ես: Հետո մտահան ընելու շէ, որ ինդեքսի մեջ առնված գիրքերով կարելի է

աշխարհի լավագույն մատենադարանը ունենալ:

Բաց աստի, կհավատամ նաև, թե շատ մը կաթողիկներ իրենց բովանդակ կյանքին մեջ «մեղանշած» ըըլլան: Ահավասիկ պատեհ առիթ մը խոստովանահոր պարտապ չներկայանալու համար:

Ժամանակին, կաթողիկ անփորձ օրիորդ մը, սովորության համաձայն, վարդապետի մը կներկայանա խոստովանելու դիտավորությամբ: Աստուծո պաշտոնյան, ու շղարշներով վարագույրի խույցի մը մեջ օրիորդին զետ առանձնանալե ետքը կհարցնե.

— Աղջիկս, պատմե՛ նայիմ, ի՞նչ հանցանքի մեջ գտնված ես:

— Որեւէ հանցանք չեմ գործած, — կպատասխանե օրիորդը կարմրելով:

— Հայնժամ, — կավելցնե վարդապետը, —

գնա մեղանչի՛ ու ապա եկուր խոստնվանելու...

Արդ, ո՞վ կաթողիկ հայունակից, եթե երբեք տակավին հայկական արյունը շրջան կընե երակներուդ մեջ, ի սեր ճշմարտության, մել մը կարդա «Հայոց եկեղեցին» ու ապա շտապե խոստովանահորը մոտ: Մեկ անգամ միայն, եթե չհավելիս, կրակին հանձնե զայն:

Իսկ դո՛ս, ո՞վ Հայաստանյայց եկեղեցվո հավատարիմ զավակ, ո՞չ միայն կարդա «Հայոց եկեղեցին», այլ նաև օրինակ մը նվիրե՛ կաթողիկ բարեկամիդ կամ ազգականիդ: Եթե նյութական պայմանները ձեռնտու չեն, առորյա հացիդ փոխարժեքով ապահովե՛ զայն:

ԼԵՒՆՑԻ  
(Վեցված է Հալեպի «ՍՈՒՐԻԱ» բերքից)

